## «1148.ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ «11005. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԻ
## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

**1. Ճամբարներում** երեխաների մշակութային ժամանցի և մշակութային կրթության ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ մշակութային միջոցառումները.

-«Ստեղծագործական հանդիպումներ անվանի արվեստագետների հետ»,

-«Մանկապատանեկան ֆիլմերի ցուցադրություն»,

-«Ազգային համույթների համերգներ»,

-«Տիկնիկային և/կամ մանկապատանեկան ներկայացումներ»,

-«Այլ մշակութային միջոցառումներ»:

2. **Ճամբարներում** երեխաների մշակութային հաղորդակցության խթանման և դպրոցականների մշակութային կարողությունների զարգացման նպատակով՝ ելնելով դպրոցականների կսրողություններից, անհրաժեշտ է կազմակերպել նկարչական, դեկորատիվ-կիրառական արվեստի, պարի. թատերական, երգչախմբային վարպետության դասեր: Վարպետության դասերին ընդգրկված դպրոցականների մասնակցությամբ կազմակերպել ցուցահանդեսներ, համերգներ և այլ կրթամշակութային միջոցառումներ: